ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ԻՐԱՎԱԿԱՆ ՁԱՓԱՆԻՇՆԵՐ

ԼՐԱԳՐՈՂԻ՝ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՐՑՄԱՆ ԵՎ ԱՅԴ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՐԵՎԱՆ 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Իրավական չափանիշներ ձևավորելու անհրաժեշտությունը և նպատակը.....3

2. Լրագրողի աշխատանքին և անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիությանը, անձնական տվյալների պաշտպանությանը վերաբերող ներպետական ու միջազգային իրավական կանոնները 4

3. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի եզրահանգումներն ու իրավական չափանիշները..... 13

1. Իրավական չափանիշներ ձևավորելու անհրաժեշտությունը և նպատակը

Մարդու իրավունքների պաշտպանին լրատվական գործունեություն իրականացնող մի շարք անձինք և լրագրողներ հասցեագրել են հարցադրումներ՝ կապված հայցվող տեղեկությունների տրամադրումը պետական մարմինների կողմից մերժելու իրավաչափության հետ: Խոսքը վերաբերում է այն տեղեկություններին, որոնք պարունակում են անձնական տվյալներ: Ըստ հարցադրումների՝ նման մերժման հիմքում դրվում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջը, այն է՝ տեղեկատվության տնօրինողը մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը: Ըստ լրագրողների՝ վերջիններիս պատասխան է տրվում, որ հայցվող տվյալները հանդիսանում են անձի անձնական կյանքի վերաբերյալ տեղեկություններ, ուստի առանց այդ անձի համաձայնության դրանց տրամադրումը ենթակա է մերժման:

Ներկայացված իրավիճակների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ բարձրացված հարցերին պատասխանելու համար անհրաժեշտ է իրականացնել իրավական ուսումնասիրություն և դրա արդյունքում նախանշել կոնկրետ չափանիշներ, որոնք պետք է կիրառելի լինեն լրագրողի՝ անձնական տվյալներ պարունակող տեղեկություններ հայցելիս և պետական մարմնի՝ դրանց տրամադրման հարցը քննարկելիս:

Սույն իրավական ուսումնասիրության նպատակն է ձևավորել իրավական չափանիշներ, որոնք ուղենշային կլինեն լրատվական գործունեություն իրականացնողի՝ անձնական տվյալներ պարունակող տեղեկություններ ստանալու հարցման, այդ առնչությամբ պետական մարմնի պարտականության, ինչպես նաև այլ անձանց անձնական տվյալների պաշտպանության ճիշտ հարաբերակցություն ապահովելու հարցում՝ այդպիսով նպաստելով երկրում իրավակիրառ պրակտիկայի բարելավմանը:

Ուսումնասիրությունն իրականացվել է անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության, այդ թվում՝ անձնական տվյալների պաշտպանության և տեղեկություններ ստանալու իրավունքի հարաբերակցության բացահայտման, երկու իրավական արժեքների հավասարակշռման, համապատասխան ներպետական կարգավորումների և միջազգային իրավական մոտեցումների վերլուծության հիման վրա:

2. Լրագրողի աշխատանքին և անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիությանը, անձնական տվյալների պաշտպանությանը վերաբերող ներպետական ու միջազգային իրավական կանոնները

ՀՀ սահմանադրության 51-րդ հոդվածը երաշխավորում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու յուրաքանչյուրի իրավունքը: Հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ այդ իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Միևնույն ժամանակ, Սահմանադրության 31-րդ հոդվածը երաշխավորում է յուրաքանչյուրի մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունքը: Սահմանադրական դրույթն ամրագրում է այս իրավունքի սահմանափակման իրավաչափ սահմանները՝ նշելով, որ մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Սահմանադրության մեկ այլ՝ 34-րդ հոդվածով երաշխավորված է, որ յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունք: Անձնական տվյալների մշակումը պետք է կատարվի բարեխղճորեն, օրենքով սահմանված նպատակով, անձի համաձայնությամբ կամ առանց այդ համաձայնության՝ օրենքով սահմանված այլ իրավաչափ հիմքի առկայությամբ:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ անձնական տվյալ է համարվում ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը:

Նույն օրենքի 4-րդ հոդվածն ամրագրում է, որ անձնական տվյալները մշակվում են օրինական և որոշակի նպատակներով **և առանց տվյալների սուբյեկտի համաձայնության չեն կարող օգտագործվել այլ նպատակներով:** Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասն

ամրագրում է, որ առանց անձնական տվյալների սուբյեկտի համաձայնության մշակողը կարող է **անձնական տվյալները փոխանցել երրորդ անձանց կամ տվյալներից օգտվելու հնարավորություն տրամադրել, եթե դա նախատեսված է օրենքով և ունի բավարար պաշտպանության մակարդակ:**

«Զանգվածային լրատվության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արգելվում է օրենքով սահմանված կարգով գաղտնի համարվող կամ քրեորեն պատժելի արարքներ քարոզող, ինչպես նաև **այնպիսի տեղեկատվության տարածումը, որը խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը:** Նույն հոդվածի 3-րդ մասն ամրագրում է, որ **մարդու անձնական և ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկատվության տարածումը թույլատրվում է, եթե դա անհրաժեշտ է հանրային շահերի պաշտպանության համար:**

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ տեղեկատվության տնօրինողը, բացառությամբ հոդվածով սահմանված դեպքերի, **մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը**, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը:

Անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության, անձնական տվյալների պաշտպանության և տեղեկություններ ստանալու իրավունքների սահմանադրաիրավական և օրենսդրական դրույթների ուսումնասիրությունը վկայում է, որ նախ, օրենսդիրը մարդու անձնական կյանքի՝ պաշտպանության ենթակա շրջանակներն ամրագրել է՝ դրանում ներառելով անձին վերաբերող և վերջինիս անհատականացնող ցանկացած տվյալ: Այդ տվյալների հրապարակումը, ընդհանուր կանոնի համաձայն, իրավաչափ է, եթե առկա է անձի համաձայնությունը: Միևնույն ժամանակ, թե՛ սահմանադրական մակարդակում ամրագրված՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման հիմքերի, թե՛ մեջբերված օրենսդրական դրույթների համադրությունը ցույց է տալիս, որ քննարկվող **իրավունքին միջամտությունն անձի համաձայնության բացակայության պայմաններում կարող է իրավաչափ լինել, եթե այդպիսի միջամտության հիմքերն ամրագրված են օրենքով, հետապնդում են սահմանադրի կողմից կանխորոշված՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների**

պաշտպանության նպատակ: Ընդ որում, իբրև այդպիսի հիմք՝ կարող է հանդես գալ լրագրողական գործունեության շրջանակներում հանրային հետաքրքրության կամ մտահոգության առարկա հանդիսացող տեղեկությունների հրապարակման անհրաժեշտությունը:

Տեղեկություններ ստանալու և մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքների շրջանակները սահմանված են նաև միջազգային մակարդակում:

Մասնավորապես, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2016 թվականի ապրիլի 13-ի ‹‹Լրագրողական գործունեության և լրագրողների ու մամուլի մասնակիցների ապահովության պաշտպանության մասին›› թիվ CM/Rec(2016)4[1] հանձնարարականը սահմանում է, որ խոսքի ազատության համար բարենպաստ միջավայրը պետք է ունենա մի շարք առանցքային հատկանիշներ, որոնք համակցության մեջ խոսքի և տեղեկատվության ազատության և ակտիվ հանրային բանավեճերի զարգացման պայմաններ կստեղծեն: **Տեղեկություններ ստանալու իրավունքը ներառում է տեղեկությունների հասանելիության իրավունքը: Հասարակությունն իրավունք ունի ստանալու հանրային հետաքրքրություն ներկայացնող տեղեկություններ և գաղափարներ, որոնք լրատվական գործունեություն իրականացնողները խնդիր ունեն տարածելու:** Տեղեկությունների հավաքագրումը լրագրողական գործունեության կարևոր նախապատրաստական քայլ է և մամուլի ազատության պաշտպանության ենթակա բաղկացուցիչ մասը: **Լրագրողների և մամուլի այլ ներկայացուցիչների մասնակցությունը հանրային իրավաչափ մտահոգության հարցերով հանրային բանավեճերին չպետք է խոչընդոտվի, օրինակ, տեղեկությունը հասանելի դարձնելու միջոցները ծանրաբեռնելով կամ կամայական սահմանափակումներով, որոնք կարող են դառնալ անուղղակի գրաքննության եղանակներ:**

Հանձնարարականի «Սկզբունքներ» բաժնի 2-րդ կետի համաձայն՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված **խոսքի և տեղեկատվության ազատության իրավունքը ժողովրդավարական հասարակության առանցքային հիմքերից է, դրա առաջընթացի և յուրաքանչյուր անհատի զարգացման պայմաններից մեկը:** Խոսքի ազատությունը կիրառելի է ոչ միայն ընդունելի, անվնաս կամ չեզոք տեղեկությունների կամ գաղափարների, այլև այնպիսի տեղեկությունների նկատմամբ, որոնք վիրավորում, ցնցում կամ անհանգստացնում են պետությանը կամ հասարակության որոշակի խմբին: Այդպիսով,

խոսքի ազատությունը նպաստում է ողջամիտ հանրային բանավեճին, որն իր հերթին բազմակարծության, հանդուրժողականության վրա հիմնված ժողովրդավարական հասարակության նախադրյալ է: **Լրագրողների ու մամուլի մասնակիցների այդ իրավունքին ցանկացած միջամտություն ունենում է սոցիալական հետևանքներ, քանի որ նման սահմանափակումը միջամտում է նաև տեղեկություններ փնտրելու և ստանալու այլոց իրավունքին ու հանրային բանավեճին:**

Միևնույն ժամանակ, Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ խոսքի ազատության իրավունքի իրացումը ենթադրում է նաև պարտականություններ և պատասխանատվություն: **Լրատվական գործունեության տեսանկյունից այդպիսի պարտականություն է բարեխիղճ գործելակերպը՝ ուղղված լրագրողական էթիկայի սկզբունքների պահպանմամբ հստակ և հավաստի տեղեկությունների տրամադրմանը**[1]**:**

Նախարարների կոմիտեի՝ Մամուլի միջոցով քրեական վարույթին վերաբերող տեղեկությունների տրամադրման վերաբերյալ թիվ (2003)13 հանձնարարականն ամրագրում է այդպիսի տեղեկություններ հրապարակելիս լրագրողական գործունեության որոշակի սկզբունքներ՝ նպատակ ունենալով հավասարակշռելու Կոնվենցիայով երաշխավորված արդար դատաքննության, խոսքի ազատության և անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքների հնարավոր հակասությունը:

Այդ սկզբունքները հիմնականում վերաբերում են ընթացիկ քրեական վարույթների լուսաբանման առանձնահատկություններին՝ վարույթին ներգրավված անձանց իրավունքների ապահովման և արդարադատության շահի հաշվառմամբ: Իբրև մամուլի կողմից քրեական գործով վարույթներին վերաբերող տեղեկությունների հրապարակման սկզբունքներ՝ Հանձնարարականում, մասնավորապես, առանձնացվում են անմեղության կանխավարկածն ու ընթացիկ քրեական վարույթի առնչությամբ գաղտնիության պաշտպանությունը, քրեական վարույթի ընթացքում պարբերական տեղեկատվության սկզբունքը: Վերջինի հետ կապված՝ Հանձնարարականը նշում է, որ հանրային հետաքրքրություն ներկայացնող կամ հանրային ուշադրության կենտրոնում գտնվող քրեական վարույթների առնչությամբ դատարանները և ոստիկանական մարմինները **պարտավոր են մամուլին տեղեկացնել իրենց հիմնական գործողությունների մասին,**

[1] https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectId=09000016806415d9#_ftn1

քանի դեռ դրանք չեն վնասել քննության և հարցումների գաղտնիությունը կամ ձգձգել կամ դժվարացնել դատավարության ընթացքը:

Բացի այդ, Հանձնարարականի՝ դատարանի դատավճռի կատարումից հետո մամուլի հրապարակումների վերաբերյալ 18-րդ սկզբունքն ամրագրում է, որ **դատարանի նշանակած պատիժը կրած անձանց՝ հասարակություն վերաինտեգրմանը չխոչընդոտելու նպատակով Կոնվենցիայի 8-րդ հոդվածը պետք է ներառի այդ անձանց ինքնության պաշտպանությունը՝ իրենց կողմից կատարված հանցանքի առնչությամբ, քանի դեռ նրանք ուղղակիորեն չեն տվել ինքնությունը բացահայտելուն ուղղված համաձայնությունը կամ վերջիններս և իրենց կատարած հանցանքը կրկին հանրային ուշադրության կենտրոնում են կամ դարձել են այդպիսին[2]:**

Խոսքի ազատության իրավունքի երաշխավորմանը զուգահեռ՝ միջազգային իրավական փաստաթղթերն ամրագրում են անձի անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը: Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն անդրադարձել է «անձնական կյանք» եզրույթի բովանդակությանը՝ ամրագրելով, որ մասնավոր կյանքը լայն հասկացություն է, որը հնարավոր չէ սպառիչ սահմանել: Դատարանի եզրահանգմամբ՝ այն ներառում է անձի նույնականացմանը վերաբերող ***բոլոր տեղեկությունները***, ինչպիսիք են, օրինակ, մարդու անունը, լուսանկարը կամ ֆիզիկական և բարոյական հատկանիշների ամբողջությունը: Այս հայեցակարգը ներառում է նաև անձի՝ անցանկալի ուշադրությունից հեռու ապրելու իրավունքը:

Դատարանն ընդգծել է նաև, որ անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքն ամրագրող Կոնվենցիայի 8-րդ հոդվածի երաշխիքն առաջին հերթին նպատակ ունի ապահովելու անձի հարաբերություններն այլ անձանց հետ՝ առանց արտաքին միջամտության (Սմիրովան ընդդեմ Ռուսաստանի վճիռը, 2003 թվականի հուլիսի 24-ի գանգատ թիվ 46133/99 և 48183/99, կետ 95, Ս-ն և Մարփերն ընդդեմ Միացյալ Թագավորության վճիռը, 1997 թվականի փետրվարի 25, գանգատներ թիվ 30562/04 և 30566/04, կետ 66): «Անձնական կյանք» հասկացության մեջ ընդգրկվում են այնպիսի տվյալներ, որոնք անձը կարող է ողջամտորեն ակնկալել, որ չեն հրապարակվի առանց իր համաձայնության (Ֆլինկկիլան և այլք ընդդեմ Ֆինլանդիայի վճիռը, 2010 թվականի ապրիլ

[2] https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectId=09000016805df617

6-ի գանգատ թիվ 25576/04, կետ 75, Սարիստոն և այլք ընդդեմ Ֆինլանդիայի վճիռը, 2010 թվականի հոկտեմբերի 12-ի գանգատ թիվ 184/06, կետ 61):

Քննարկվող հարցի շրջանակներում կարևոր նշանակություն ունեն նաև Եվրոպական դատարանի իրավական եզրահանգումները անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի սահմանափակման, ինչպես նաև խոսքի ազատության հետ դրա հարաբերակցության վերաբերյալ:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 8-րդ և 10-րդ հոդվածներով ամրագրված այս իրավունքների երաշխավորումը ենթադրում է այդ **երկու արժեքների պաշտպանության արդար հավասարակշռություն:**

Մասնավորապես, Եվրոպական դատարան դիմած լրագրողը ցանկացել է տեղեկություններ ստանալ **քրեական վարույթում որպես մեղադրյալ ներգրավված անձի վերաբերյալ**: Պետությունը մերժել է նման տեղեկությունների տրամադրումը ոչ միայն նախնական քննության շահերից ելնելով, այլև վկայակոչելով անձի անձնական կյանքի հարգանքի իրավունքը: Հաշվի առնելով գործի փաստական հանգամանքները՝ Դատարանն արձանագրել է, որ պետության կողմից իրավունքի խախտում տեղի չի ունեցել (Բեդատն ընդդեմ Շվեյցարիայի գործով 2016 թվականի մարտի 26-ի վճիռը, գանգատ թիվ 56925/08, կետ 74):

Մեկ այլ՝ Դոսամանտեսն ընդդեմ Իսպանիայի գործով վճռում Եվրոպական դատարանն ընդգծել է լրատվամիջոցների պարտավորվածությունը անձ մասնավոր կյանքին առնչվող հրապարակումներ իրականացնելիս: Լրատվամիջոցը պարտավոր է հավասարակշռել անձի մասնավոր կյանքը հարգելու և լրատվամիջոցի խոսքի ազատությունը, ներառյալ՝ տեղեկություններ ստանալու հասարակության իրավունքը տեղեկությունները հրապարակելու կամ փոխանցելու հարցը լուծելիս (Դոսամանտեսն ընդդեմ Իսպանիայի 2017 թվականի փետրվարի 21-ի վճիռը, գանգատ թիվ 20996/10):

Սփրինգեր ԱԳ-ն ընդդեմ Գերմանիայի գործով վճռում քննարկելով լրագրողի կողմից հանրահայտ դերասանի ձերբակալման և դատապարտման վերաբերյալ տեղեկությունների հրապարակման դատական արգելքի իրավաչափությունը՝ Եվրոպական դատարանը նշել է, որ կոնկրետ իրավիճակում երկու արժեքների հավասարակշռման հարցում որոշիչ նշանակություն են ունեցել այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են՝ անձի ձերբակալման ու

դատապարտման՝ հրապարակային դատական փաստ լինելը և հանրային շահի առկայությունը, անձի՝ հանրային գործիչ լինելը, ինչպես նաև տեղեկատվության ձեռքբերման եղանակն ու հավաստիությունը (Աքսել Սփրինգեր ԱԳ-ն ընդդեմ Գերմանիայի (Axel Springer AG v. Germany) գործով Եվրոպական դատարանի 2012 թվականի փետրվարի 7-ի վճիռը (ՄՊ), գանգատ թիվ 39954/08, կետեր 90-91):

Մոսլին ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճռում Եվրոպական դատարանը քննարկման առարկա է դարձրել անձի անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքին միջամտության իրավաչափությունը այն հաշվառմամբ, որ լրատվամիջոցը անձի անձնական լուսանկարները հրապարակել էր առանց վերջինիս նախնական ծանուցման: Դատարանը նշել է, որ թեև կոնկրետ իրավիճակում նյութի տարածումը հետապնդել է ոչ այնքան կրթական, որքան ժամանցային նպատակ, այն ընկնում է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի պաշտպանության ոլորտ, որը, սակայն, կարող է զիջել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի **պահանջներին, եթե տեղեկություններն** անձնական **բնույթի էին, և առկա չէր դրանք հրապարակելու հանրային շահ (**Մոսլին ընդդեմ Միացյալ Թագավորության (Mosley v. United Kingdom) գործով Եվրոպական դատարանի 2011 թվականի մայիսի 10-ի վճիռը, գանգատ թիվ 48009/08, կետեր 129-130):

Եվրոպական դատարանի մեջբերված իրավական դիրքորոշումների ընդհանրացմամբ կարելի է եզրակացնել, որ **խոսքի ազատության և անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքների հավասարակշռման հարցում իբրև կարևոր չափանիշ դիտարկվում է, թե արդյոք հարցը վերաբերել է ընդհանուր հանրային հետաքրքրություն ներկայացնող բանավեճի կամ նույնատիպ հարցի:**

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ Պաշտոնական փաստաթղթերին հասանելիության վերաբերյալ թիվ (2002)2 հանձնարարականում նշվում է, որ անդամ պետությունները կարող են սահմանափակել պաշտոնական փաստաթղթերին հասանելիությունը: Այդպիսի սահմանափակումները պետք է նախատեսված լինեն օրենքով, անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակությունում և համաչափ պաշտպանելու՝

1. ազգային անվտանգությունը, պաշտպանությունն ու միջազգային հարաբերությունները,
2. հասարակական անվտանգությունը,
3. հանցագործությունների կանխումը, քննությունն ու հետապնդումը,

4. մասնավոր կյանքի գաղտնիություն ու իրավաչափ մասնավոր շահերը,

5. առևտրային կամ այլ տնտեսական շահերը,

6. դատավարության կողմերի հավասարությունը,

7. բնապահպանությունը,

8. հանրային իշխանությունների կողմից իրականացվող ստուգումները, հսկողությունն ու վերահսկողությունը,

9. պետության տնտեսական, դրամավարկային և փոխարժեքային քաղաքականությունը,

10. հանրային իշխանությունների կողմից կամ դրանց միջև իրականացվող բանակցությունների գաղտնիությունը:

Հանձնարարականում նշվում է, որ **փաստաթղթի տրամադրումը կարող է մերժվել, եթե դրանում պարունակվող տեղեկությունների հրապարակումը կվնասի կամ կարող է վնասել վերոնշյալ իրավական շահերից որևէ մեկը, քանի դեռ առկա չէ դրանց հրապարակման գերակա հանրային շահ[3]:**

Այսպիսով, միջազգային իրավական մոտեցումները վկայում են, որ պաշտոնական փաստաթղթերին հասանելիության իրավունքն ինքնին չի կարող գերակշռել անձնական տվյալների պաշտպանության իրավունքին: Այդ իրավունքին միջամտությունը՝ տեղեկություններ ստանալու իրավունքի հաշվառմամբ, պահանջում է կոնկրետ և արդարացված պատճառ[4]:

Դրա հետ մեկտեղ, միջազգային փաստաթղթերն առանձնացնում են նաև հատուկ կատեգորիայի անձնական տվյալները, որոնց տրամադրումը ենթադրում է օրենքով սահմանված որոշակի ընթացակարգերի կիրառություն: Այսպես, Անձնական տվյալների ավտոմատացված մշակման ընթացքում անձանց պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ ռասայական ծագման, ազգային պատկանելիության, քաղաքական հայացքներին կամ կրոնական համոզմունքներին և քրեական մեղադրանքին վերաբերող տեղեկությունները դասվում են հատուկ կատեգորիայի անձնական տվյալների շարքին, որոնք կարող են մշակվել, փոխանցվել և օգտագործվել

[3] https://rm.coe.int/1680645b44

[4] Տե՛ս, Անձնական տվյալների պաշտպանության եվրոպական իրավունքի ձեռնարկը, էջ 28. http://www.echr.coe.int/Documents/Handbook_data_protection_ENG.pdf

միայն ներպետական օրենսդրությամբ հատուկ նախատեսված դեպքերում և համապատասխան երաշխիքների ապահովմամբ:

Ներպետական մակարդակով՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետն ամրագրում է, որ **հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ** են՝ անձի ռասայական, ազգային պատկանելությանը կամ էթնիկ ծագմանը, քաղաքական հայացքներին, կրոնական կամ փիլիսոփայական համոզմունքներին, արհեստակցական միությանն անդամակցությանը, առողջական վիճակին ու սեռական կյանքին վերաբերող տեղեկությունները:

ՀՀ կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի թիվ 933-Ն որոշման հավելվածով հաստատված՝ «ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի օպերատիվ տեղեկատու քարտադարանը ձևավորելու և տեղեկություններ տրամադրելու» կարգի 26-րդ կետի համաձայն՝ օպերատիվ տեղեկատու քարտադարանից ստուգվող անձանց մասին տեղեկություններ տրվում են **ֆիզիկական անձանց՝ իրենց վերաբերող առկա դատվածության կամ հետախուզման մեջ գտնվելու, կամ հաշվառված և պահպանվող ամբողջ տեղեկատվության մասին**:

Նույն կարգի 27-րդ կետը սահմանում է, որ ֆիզիկական անձանց տեղեկությունը տրամադրվում է ՀՀ ոստիկանության տարածքային բաժիններ ներկայացված գրավոր դիմումների համաձայն, ընդ որում, դիմումի վրա ֆիզիկական անձի ստորագրության իսկությունը պետք է վավերացված լինի ՀՀ ոստիկանության համապատասխան տարածքային բաժնի աշխատողի կամ օրենքով նման լիազորություն ունեցող այլ անձի կողմից:

Անձի մասին նշված կարգի 26-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված տեղեկությունը նույն կարգի 27-րդ կետով **սահմանված կարգով ստանալու իրավունք ունեն նաև տվյալ անձի ներկայացուցիչները կամ ժառանգները:**

Այսպիսով, անձնական տվյալներ պարունակող տեղեկություններ ստանալու լրագրողի իրավունքը պետք է լինի երաշխավորված: Դրա հետ միասին, այն չպետք է խախտի անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը: Միջազգային և ներպետական նորմերով երաշխավորված այս երկու իրավունքների հավասարակշռման ընթացակարգերը կարող են նախատեսել անձին վերաբերող տեղեկությունների տրամադրման որոշակի պայմաններ՝ պայմանավորված հարցվող տեղեկությունների բնույթով, սուբյեկտների կարգավիճակով և

տեղեկությունների տրամադրման նպատակով: Իբրև կարևոր չափանիշ՝ առանձնացվում է տեղեկության տարածման հարցում հանրային շահը:

3. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի եզրահանգումներն ու իրավական չափանիշները

Այսպիսով, ուսումնասիրության արդյունքները հնարավորություն են տվել ձևավորել հետևյալ գնահատականներն ու եզրահանգումները՝

1. Լրագրողների ու լրատվության ոլորտի ներկայացուցիչների գործունեությունն ունի հանրային նշանակություն: Ժողովրդավարական հասարակությունում լրագրողն ունի կարևոր դերակատարություն հանրային բանավեճերին, տեղեկություններ փնտրելու և ստանալու հասարակության իրավունքին նպաստելու առումով *(ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի իրավական չափանիշները քրեակատարողական հիմնարկ լրագրողի մուտքի իրավունքի և այդ առնչությամբ պետական իրավասու մարմնի պարտականության վերաբերյալ).*

2. Օրենքին համապատասխան և բարեխիղճ գործելու լրագրողի բարձր պատասխանատվությունն ու կոչումը պայմանավորում են պետության ներկայացուցչի պարտականությունն առաջնորդվելու լրագրողի օրինավորության, նրա բարեխղճության ու ազնվության կանխավարկածով *(ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի իրավական չափանիշները քրեակատարողական հիմնարկ լրագրողի մուտքի իրավունքի և այդ առնչությամբ պետական իրավասու մարմնի պարտականության վերաբերյալ).*

3. Միաժամանակ, տեղեկություններ ստանալու իրավունքի իրացման հարցը, երբ դա վերաբերում է անձնական տվյալներին, շրջանակների որոշակիացման հարցում առաջ է բերում մրցակցող այլ իրավաչափ շահերի, կոնկրետ դեպքում՝ անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի բովանդակության բացահայտման անհրաժեշտություն՝ քննարկվող երկու իրավական արժեքների հավասարակշռման տեսանկյունից.

4. Միջազգային իրավաբանությունն այդպիսի հավասարակշռության ապահովման ընդհանուր բանաձև է համարում խոսքի ազատության իրավունքի երաշխավորումն այնպիսի սահմաններում, որ չխախտի այլոց մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը.

5. Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքին միջամտությունը կարող է իրավաչափ լինել, եթե խոսքի ազատության իրավունքի շրջանակներում տեղեկությունների հրապարակումը պայմանավորված է հանրային գերակա շահով.

6. Հանրային գերակա շահն իր հերթին հնարավոր է հավաստել կոնկրետ գործի փաստական հանգամանքների համակցությամբ: Այդ առումով, անձնական տվյալներ պարունակող տեղեկությունների հրապարակման արդարացվածության մասին կարող են վկայել, օրինակ, համընդհանուր հետաքրքրություն ունեցող քննարկմանը նպաստելը, շահագրգիռ անձի հանրահայտ լինելն ու նրա վարքագիծը՝ տեղեկություններն անձամբ հասանելի դարձնելու առումով, հրապարակման բովանդակությունը, ձևը և հետևանքները, հանգամանքները, որոնցում արվել են հրապարակումները և այլն.

7. Յուրաքանչյուր դեպքում, երբ խոսքի ազատության իրացումը կարող է հանգեցնել այլոց մասնավոր կյանքին միջամտության, դրա նկատմամբ հարգանքը իրավակիրառող մարմնից ամեն դեպքում պահանջում է գնահատել, թե արդյոք կոնկրետ գործով փաստական տվյալները վկայում են իր տնօրինած տեղեկությունների տրամադրման հանրային շահի առկայության մասին, որը կարդարացներ անձի անձնական տվյալների հրապարակումը: Այդպիսի գնահատումն իր հերթին ենթադրում է, որ իրավակիրառող մարմինը պետք է տիրապետի էական նշանակություն ունեցող փաստերին.

8. Ասվածն ամենևին չի նշանակում, որ ամեն անգամ տեղեկություններ ստանալու իր իրավունքն իրացնելիս լրագրողը պարտավոր է իրավասու մարմնին հիմնավորել դրա անհրաժեշտությունը: Այն որևէ կերպ չի կարող մեկնաբանվել որպես լրագրողի պարտավորություն՝ հիմնավորելու տեղեկություններ ստանալու իր իրավունքի իրավաչափությունը՝ իբրև հենց այդ իրավունքի իրացման ինքնուրույն նախապայման:

9. Լրագրողն ունի օրենքով սահմանված կարգով և շրջանակներում պետական մարմիններից տեղեկություններ ստանալու երաշխավորված իրավունք.

10. Այլ է վիճակը, երբ տեղեկություններ ստանալու լրագրողի հարցումը վերաբերում է այլոց՝ օրենքով պաշտպանվող անձնական տվյալներին: Այստեղ է, որ առաջ է գալիս իրավական այդ երկու արժեքների հավասարակշռությունն ապահովելու խնդիր՝ հանրային գերակա շահի առկայության հավաստմամբ.

11. Այդպիսի իրավիճակում որքան բարձր է լրագրողի հարցման փաստարկվածությունը, որն անհրաժեշտ է հանրային գերակա շահի առկայությունը հավաստելու նպատակով անձնական տվյալների հասանելիության շեմը հաղթահարելու

համար, այնքան ավելի մեծ է հարցումը մերժելու դեպքում հակառակը հիմնավորելու պետական մարմնի պատասխանատվության բեռը (առանձին դեպքերում նաև ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ).

12. Հետևաբար, այլոց անձնական տվյալներին վերաբերող տեղեկություններ ստանալու հարցման հանգամանքների ու նպատակի նկարագրությունը (հարցվող տեղեկությունների շրջանակը, դրանք ստանալու նպատակն ու հանրային նշանակությունը և այլն) ոչ այնքան կարևոր է նրանով, որ հնարավորություն է ընձեռում իրավասու մարմնին գնահատելու դրանց տրամադրման իրավաչափությունը, այլև բարձրացնում է այդ մարմնի պարտավորվածությունն անդրադարձ կատարելու հարցմամբ ներկայացված փաստարկներին.

13. Անհրաժեշտ է, որ լրագրողի՝ անձնական տվյալներ պարունակող տեղեկությունների վերաբերյալ հարցումը, սույն իրավական վերլուծության մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներին համապատասխան, բովանդակի լրագրողական իրավաչափ գործունեության համար անհրաժեշտ այն տեղեկությունները, որոնք հնարավորություն կտան գնահատելու և հավասարակշռելու մրցակցող երկու շահերը և կվկայեն այդ տեղեկությունները տրամադրելու հարցում հանրային շահի առկայության մասին.

14. Հենց այսպիսի հարցումն է, որ տեղեկատվության տնօրինողի համար առաջացնում է առավել մեծ իրավական բեռ, այն է՝ պարտականություն գնահատելու, թե կոնկրետ իրավիճակում անձնական տվյալների պաշտպանության և տեղեկություններ ստանալու՝ երկու մրցակցող իրավունքներից որն է գերակա:

15. Արդյունքում, հայցվող տեղեկության տրամադրումը մերժելու վերաբերյալ մարմնի պատասխանը՝ ուղղված լրագրողին, չի կարող սահմանափակվել միայն անձնական տվյալների պաշպանության ներպետական օրենսդրական դրույթներին պարզապես հղում կատարելով: Այդ պատասխանը պետք է պարունակի նաև հարցմամբ ներկայացված փաստերին՝ իբրև հանրային շահը հավաստող տվյալներին տրված գնահատական: